ապաինստիտուցիոնալացում

ի՞նչ է ապաինստիտուցիոնալացումը

այս բարդ կարդացվող բառը նկարագրում է այն գործընթացը, երբ հաշմանդամություն ունեցող մարդիկ, ովքեր անարդարացիորեն գտնվում են հաստատություններում, օրինակ՝ հոգեբուժական կամ խնամքի կենտրոններում, **դուրս են գալիս** հաստատություններից ու վերադառնում համայնք.

ո՞րն է ապաինստիտուցիոնալացման նպատակը

ապաինստիտուցիոնալացման շարժման նպատակն է՝

- մի կողմից՝ փակել խնամքի ու հոգեբուժական հաստատությունները եւ ապահովել, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ անկախ կյանքով ապրեն,
- մյուս կողմից՝ կանխել նոր մարդկանց մուտքը դեպի հաստատություններ.

ինչո՞ւ է կարեւոր ապաինստիտուցիոնալացումը

պատկերացրեք, որ դուք ապրում եք ձեր համայնքում, ինքնուրույն որոշում եք ինչ անել ամեն օր. երբ քնել, երբ արթնանալ, երբ լողանալ, ինչ հագնել, ինչ ուտել, ինչ կարդալ, ինչով զբաղվել, ում հետ շփվել, ուր գնալ.

եթե որեւէ հարցով ունենում եք աջակցության կարիք, դիմում եք համայնքային ծառայությունների, օրինակ՝ այցելում եք հոգեբանի եւ պատմում եք ձեր մտահոգությունները, կամ այցելում եք պոլիկլինիկա, որտեղ խորհրդակցում եք բժշկի հետ, ըստ կարիքի՝ ստանում եք դեղորայք կամ այլ աջակցություն.

եթե այս գործողությունները բնութագրենք այլ կերպ, ապա կասենք, որ դա անկախ ապրելու ու համայնքում ներառվելու մեր իրավունքն է.

իսկ հիմա պատկերացրեք, թե ի՞նչ կլինի, եթե ձեզ շրջապատող մարդիկ ենթադրեն, որ դուք ի վիճակի չեք ինքնուրույն ապրել համայնքում ու ստանալ անհրաժեշտ ու նախընտրելի ծառայություններ.

ի՞նչ կլինի, եթե ձեզ զրկեն անկախ ապրելու ու համայնքում ներառվելու իրավունքից ու տեղափոխեն որեւէ հաստատություն.

հաշմանդամություն ունեցող մարդկանց պատմականորեն զրկել են իրենց կյանքի նկատմամբ վերահսկողությունից.

արդյունքում՝ համայնքում անհրաժեշտ ու հասանելի առողջապահական, սոցիալական աջակցության տրամադրումը փոխարինվել է հաշմանդամություն ունեցող մարդկանց հաստատություններ տեղափոխելով.

ապաինստիտուցիոնալացումը դադարեցնում է
հաստատություններում մարդկանց գտնվելու անարդար պրակտիկան

ի՞նչ է հաստատությունը

պատկերացրեք որեւէ բնակելի տարածք, որտեղ գտնվող մարդիկ մեկուսացած են համայնքից, ստիպված են ապրել այլ մարդկանց հետ, ում չեն ճանաչում, ստանալ հոգեբուժական կամ խնամքի ծառայություն, որն իրենք չեն ընտրել. ապրել այնպիսի կանոններով, որոնք իրենք չեն սահմանել. արթնանալ, քնել, հագնել, ուտել, խմել, լողանալ, զբոսնել միայն այն ժամանակ, երբ դա թույլատրելի է.

այդպիսի բնակելի տարածքներն անվանում են հաստատություն՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ ֆիզիկական պայմաններ ունի այն, կամ քանի մարդ է միաժամանակ բնակվում տարածքում.

հաստատությունում գտնվելը
բռնություն է հաշմանդամություն ունեցող մարդու նկատմամբ

ինչո՞ւ է հաստատությունում գտնվելը համարվում բռնություն

այս հարցին պատասխանելու համար միասին վերհիշենք, թե ինչ է տեղի ունենում հաշմանդամություն ունեցող մարդու հետ, երբ նա տեղափոխվում է հաստատություն՝

- ▢ առանձնացում ու մեկուսացում համայնքից
- ▢ անծանոթ մարդկանց հետ ապրելու պարտադրանք
- ▢ ռեժիմային մշակույթի հարկադրանք
- ▢ զանգվածային վարքի պարտադրանք
- ▢ անհատական կարիքների ստորադասում
- ▢ սեփական կյանքի ու որոշումների նկատմամբ վերահսկողության բացակայություն

ի՞նչ է անհրաժեշտ այս անարդարությանը վերջ դնելու համար

հաստատություններում մարդկանց գտնվելու անարդար պրակտիկային վերջ դնելու համար անհրաժեշտ է իրականացնել **ապաինստիտուցիոնալացում.**

ու չնայած այս հարցում առաջնահերթ պարտավորություն ունի պետությունը, կարեւոր է նաեւ իմանալ, թե ինչ կարող ենք անել բոլորս.

պատմեք ձեզ շրջապատող մարդկանց, թե ինչ է ապաինստիտուցիոնալացումը. կիսվեք նրանց հետ այս եւ ապաինստիտուցիոնալացման վերաբերյալ այլ նյութերով. իրազեկ լինելը կօգնի հաղթահարել հաշմանդամություն ունեցող մարդկանց վերաբերյալ առկա կարծրատիպերը

միացեք այն խմբերին, որոնք պայքարում են այս անարդարությանը վերջ դնելու համար. միասին փոփոխությունները հնարավոր են

եթե հետազոտող եք, լրագրող կամ աջակցող մասնագետ, փորձեք ձեր գործունեության ընթացքում անդրադառնալ թեմային. կարեւոր է ձեւավորել համատեղ պահանջ

հաստատություններում գտնվող մարդկանց իրավունքների պաշտպանությունը ներառեք ձեր գործունեության մեջ. եթե զբաղվում եք որեւէ խմբի իրավունքների ու շահերի պաշտպանությամբ, օրինակ՝ կանանց իրավունքների պաշտպանությամբ, ապա քննարկումներ կազմակերպեք նաեւ հաստատություններում գտնվող կանանց իրավունքների վերաբերյալ

հոգ տարեք ձեր ու պայքարակից ձեր ընկերների մասին. մեծ կամք ու կարողություն է անհրաժեշտ ապահինստիտուցիոնալացումը սկսելու ու հաջող իրականացնելու համար

հիշեք, որ ապահինստիտուցիոնալացումը 1 օրում տեղի չի ունենում. արդարությունը պահանջում է բոլորիս ջանքերը

© Փոփոխություն
2024 Երեւան

Change
Փոփոխություն